



## ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀՐԱՎԵՐ

Վեոլիա Ջուր ՓԲԸ-ն հրավիրում է համապատասխան մասնագիտացված ընկերություններին ներկայացնելու գնային առաջարկ՝ ներքոհիշյալ մակնիշի մեքենաների սպասարկման համար՝

1. Լոտ 1՝ (Հյունդաի, Կիա, Ռենո)
2. Լոտ 2՝ (Նիվա 21230 GLS, Վագ 2121, Լադա ՎԱԶ 2106, ՎԱԶ 2107, ՌԻԱԶ)

Սույն գնմանը մասնակցելու իրավունք չունեն անձինք.

- 1) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ դատական կարգով ճանաչվել են սնանկ,
- 2) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:
- 3) որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու օրվան նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է,
- 4) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում:

Ընտրված մասնակցի կամ մասնակիցների հետ կկնքվի միավոր գնի շրջանակային համաձայնագիր/համաձայնագրեր մեկ տարի տևողությամբ՝ հետագայում շարունակելու հնարավորությամբ:

Որպես պայմանագրի ստորագրման նախապայման, պայմանագիր շնորհված ընկերությունը/ները պետք է ներկայացնի/են հարկային մարմնի կողմից վավերացված տեղեկանք՝ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով ժամկետանց պարտքերի բացակայության վերաբերյալ:

Հետաքրքրվող ընկերությունները կարող են տեխնիկական բնութագրերի և գնային առաջարկի ներկայացման ձևի վերաբերյալ տեղեկություններ ստանալ Վեոլիա Ջուր ՓԲԸ-ից աշխատանքային օրերին ժամը 09.00-13.00 և 14.00-18.00:

Գնային առաջարկները պետք է ներկայացվեն ստորագրված, կնքված և փակ ծրարով կամ էլեկտրոնային եղանակով ոչ ուշ, քան 2018թ. հունվարի 25-ը, ժամը 15:00՝ ստորև նշված հասցեում՝

ՀՀ, ք. Երևան, 0014, Ադոնցի 6/1, Վեոլիա Ջուր ՓԲԸ, 9-րդ հարկ, Գնումների վարչություն:  
Հեռ.՝ (374 11) 30-01-86, (438), էլ. փոստ՝ [aytsemnik.martirosyan@veolia.com](mailto:aytsemnik.martirosyan@veolia.com):